ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱՍՏԱՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

մայիսի 27-ից 30-ը, 2025թ.

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Սլավիկ Սարգսյան, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), մայիսի 27-ից 30-ը, *2025թ.*

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ղազախստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Ղազախստանի աշխատողների առողջության և անվտանգության վերաբերյալ 13-րդ միջազգային կոնֆերանս-ցուցահանդեսին (KIOSH)

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Կոնֆերանս-ցուցահանդեսին ընթացքում քննարկվել են՝

- Աշխատողների առողջության և անվտանգության ապահովումը, մարտահրավերները և հեռանկարները.
- Արտադրական վնասվածքներից խուսափման միջազգային ստանդարտներ. ռազմավարություններ և փորձ.
- Աշխատողների առողջ և անվտանգ ապագան. ռազմավարություններ, միտումներ և նորարարական լուծումներ

- Իրավախախտումների կանխարգելման ինստիտուտի ամրապնդումը և հետադարձ կապի ապահովումը:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Կոնֆերանս-ցուցահանդեսին ընթացքում համագործակցության և փորձի փոխանակման շրջանակներում ներկայացվել է Տեսչական մարմինների գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել իրականացվող վերահսկողության ձևերին և բնույթին:

Ելույթով հանդես են եկել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը, Ղազախստանի Հանրապետության փոխվարչապետը, Աշխատանքի և բնակչության սոցիալական պաշտպանության նախարարը, Արտակարգ իրավիճակների փոխնախարարը, աշխատանքային ոլորտի մասնագետները, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Անցկացվել է աշխատողների առողջության և անտվանգության ապահովման վերաբերյալ ցուցահանդես, որտեղ ներկայացվել են նորարական լուծումներ, նոր կիրառելի տեխնոլոգիաներ, անհատական պաշտպանիչ միջոցներ, առողջապահական և հիգիենիկ լուծումներ:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Արդյունավետ են գնահատվել KIOSH կոնֆերանս-ցուցահանդեսի կազմակերպումը՝ որպես առանցքային մասնագիտացված հարթակ՝ պետություն-բիզնես-միջազգային հանրություն փոխգործակցության արդյունավետ իրականացման համար: Այն հնարավորություն է տալիս ձեռք բերած գիտելիքներով և փորձով կիսվելու մասնակից պետությունների միջև և վեր հանելու արդիական ու լավագույն տարբերակը:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Այս հանդիպումն ակնհայտորեն նպաստելու է ինչպես ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

2025 թվականի հունիսի 03

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN SLAVIK 3807890467

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ